# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Համազգեստ 2 (լրակազմ) | Համազգեստ 2 (լրակազմ) | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Բաճկոն՝ մուգ կապույտ, (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, երկարաթև, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Աջ վրադիր գրպանի կափույրի վերևի մասում ամրացվում է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» անվանումը, իսկ ձախ մասում՝ պրոբացիայի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը: Կողային գրպանները` շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Բաճկոնը գոտիով է` կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Օձիքը` ծալովի: Ուսադիրների շրջանում` երկու փակօղակներ և երկու կամրջակներ` ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 10 սմ ներքև` ամրացվում է պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, 9 սմ շառավղով,  տաբատ/կիսաշրջազգեստ (նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ) • տաբատ` մուգ կապույտ (44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, 2- տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուրվագիծը` ուղիղ, երկու կողային գրպաններով: Տաբատը` դեպի ձախ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ- օղակով, գոտու վրա 6 հատ գոտեմակ օղակներ են, հետնամասում ներկարված, մեկ կոճակով կոճկվող գրպան, կիսաշրջազգեստ` մուգ կապույտ 44-տոկոսանոց բուրդ, 54-տոկոսանոց պոլիէթիլեն, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2-տոկոսանոց լայկրա) ±3% կտորից, ուղիղ կարվածքով, երկկողմանի սեղմոններով, աստառով, գոտին` գոտեմակօղերով, հետևամասում` բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:  շապիկ` մուգ կապույտ գույնի կտորից` (95-տոկոսանոց բամբակ, 5-տոկոսանոց լայկրա) ±3%: Շապիկն արտադրվում է ուղիղ ձևվածքով, կարճաթև, վզամասը մշակված է 2 սմ լայնության տրիկոտաժե մանժետով` եզրագծված 4-5 մմ լայնության կրկնակի զարդակարով: Պրոբացիայի ծառայության խորհրդանիշը, պրոբացիայի ծառայողի անվան առաջին տառը և ազգանունը և չափսերը կտրամադրվեն Պատվիրատուի կողմից նախապես ներկայացվող հայտով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |